

1.3. Չներ և սակագներ

2000թ. հունվար-հոկտեմբերին զների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական զների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքս ²⁾	Չների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման զների ինդեքս ⁶⁾
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
Մայիս	99.7	101.3	100.0	100.7	91.4	102.5
Հունիս	99.7	99.0	100.0	100.8	71.9	104.7
Հուլիս	98.0	100.3	99.9	102.0	81.8	104.9
Օգոստոս	98.7	98.2	100.0	100.1	95.0	101.2
Սեպտեմբեր	100.3	100.3	100.9	98.9	96.1	98.5
Հոկտեմբեր	100.0	100.0	100.1	99.2	101.0	103.1
2000թ. հոկտեմբերը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	97.2	101.5*)	101.0	101.9	76.6*)	107.3*)
2000թ. հունվար-հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	99.1	100.7	100.5	100.1	87.5	103.4

*) 2000թ. հոկտեմբերի և 1999թ. դեկտեմբերի փաստացի զներով հաշված:

1) Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում զների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

2) Չների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

3) Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

4) Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

5) Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման զների և ծավալների հետազոտման տվյալների:

6) Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման զների և ծավալների հետազոտման տվյալների:


Սպառողական զներ: Հայաստանի Հանրապետությունում 2000թ. հոկտեմբերին սպառողական շուկայում նկատվել է զների համեմատաբար կայուն մակարդակ: Ընթացիկ ամսում սեպտեմբերի համեմատ սպառողական զների ինդեքսը կազմել է 100.0 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99.9 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.1, ծառայությունների սակագներինը՝ 100.1 տոկոս:

Սպառողական զների ինդեքսը 2000թ. հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 97.2 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 100.8 տոկոսի դիմաց: Ընթացիկ տարվա նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) զների ինդեքսը կազմել է 95.4 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.0, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.6 տոկոս:

2000թ. հունվար-հոկտեմբերին սպառողական զների միջին ամսական նվազումը կազմել է 0.3 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.1 տոկոս հավելաճի դիմաց:


2000թ. հունվար-հոկտեմբերին 1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.1 տոկոս, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.6 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.2, ծառայությունների սակագներինը՝ 101.5 տոկոս, իսկ հոկտեմբերին 1999թ. հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 98.4 տոկոս, 97.2, 101.6 և 101.5 տոկոս:

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 1999 - 2000թթ. հունվար-հոկտեմբերին տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100)



2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում արձանագրված գնային հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում արտարժույթի շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.9 տոկոս հավելաճ: 2000թ. հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն աճել է 3.9 տոկոսով, իսկ սպառողական գների զծով գրանցվել է 2.8 տոկոս նվազում: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում սպառողական գների և փոխարժեքի մակարդակն աճել է համապատասխանաբար 0.8 և 0.5 տոկոսով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-հոկտեմբերին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում, ի տարբերություն նախորդ ամսվա, որի ընթացքում գրանցվել էր 0.7% գնաճ, 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է գների 0.1% նվազում: Դրան մեծապես նպաստել է բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 7.3% գների նվազումը: Դիտարկված բնակավայրերից 9-ում ընթացիկ ամսում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 18.0-3.3%-ով (նվազման համեմատաբար բարձր ցուցանիշը գրանցվել է Թալի-

նում), իսկ Հրազդանում (Չարենցավանում) արձանագրվել է նշված ապրանքների 0.9% գնաճ: Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 5.6%-ով: Հոկտեմբերին նկատելիորեն նվազել են կաղամբի (36.2%), ծաղկակաղամբի (35.5), կանաչ լոբու (28.9), գազարի (19.9), սեղանի ճակնդեղի (14.7), գլուխ սոխի (13.7%) գները: Միաժամանակ արձանագրվել է լոլիկի (17.6 %), վարունգի (13.3), կարտոֆիլի (0.9 %) գնաճ:

Ի տարբերություն մայիս-սեպտեմբեր ամիսների, որոնց ընթացքում արձանագրվել է շաքարավազի գնաճ (22.8%), 2000թ. հոկտեմբերին գրանցվել է 0.2% գնի նվազում: Վերջինս հանրապետության դիտարկված բնակավայրերից 5-ում արձանագրված շաքարավազի գնի 3.0-0.5% նվազման արդյունք է: Դրան զուգահեռ, Վանաձորում և Եղեգնաձորում գրանցվել է շաքարավազի գնի համապատասխանաբար 1.1 և 0.4% գնաճ, իսկ Երևանում, Գյումրիում և Վաղարշապատում այն մնացել է նախորդ ամսվա մակարդակին: Հոկտեմբերին 0.2-0.1%-ով նվազել են նաև հրուշակեղենի, ոչ ոգելից խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի գները:

2000թ. հոկտեմբերին արձանագրվել են նաև պարենային ապրանքների գնային փոփոխություններ աճման միտումով: Այսպես, 2000թ. հոկտեմբերին, ինչպես և նախորդ ամսին, զգալիորեն աճել են ձկնամթերքի գները: Հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ձկնամթերքի գնաճը կազմել է 17.4%: Դա բացատրվում է սիգի՝ 19.3%, ապխտած և աղ դրած ձկան՝ 8.4% գնաճով: Հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է ձկնամթերքի 4.9-30.7% գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գյումրիում):

Մրգի ապրանքախմբում ընթացիկ ամսում գրանցվել է 1.8% գնաճ: Դրան մեծապես նպաստել է խնձորի (4.5%), դեղձի (4.8), աղամաթգի (5.8), մանդարինի (29.4), ինչպես նաև բանջարա-բոստանային մշակաբույսերից՝ սեխի (16.6) և ձմերուկի (8.1%) գնաճը: Միաժամանակ գրանցվել է խաղողի (9.1%), տանձի (6.9) և նարնջի (9.9%) գների նվազում: Դիտարկված բնակավայրերից 4-ում հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ մրգի գնաճը կազմել է 2.5-12.8% (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Կապանում): Երևանում մրգի գնաճը կազմել է 4.4%: Հետազոտվող մյուս 6 բնակավայրերում գրանցվել է մրգի գների 7.2-4.1% նվազում: 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ 0.9-3.5% գնաճ է գրանցվել կենդանական և բուսական յուղի, կաթնամթերքի և ձվի ապրանքախմբերում, իսկ հացամթերքի և մսամթերքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում ընթացիկ տարվա հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է 0.1% գնաճ, ընդ որում ոգելից խմիչքի գները նվազել են 0.1%-ով, իսկ ծխախոտի գծով մայիս-սեպտեմբերին գրանցված 1.9% գնային ընդհանուր նվազմանը հաջորդել է 0.1% գնաճ: 2000թ. հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ ծխախոտի գնաճը կազմել է 2.8%:

Ստորև բերված են գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2000 թվական				1999թ. հունվար-հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	<i>հոկտեմբերը</i>			հունվար- հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. սեպտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ			
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	95.4	97.2	99.9	97.6	95.4
Պարենային ապրանքներ	94.1	95.8	99.9	93.3	94.2
հացամթերք	95.3	95.2	100.0	96.9	95.0
մսամթերք	96.8	95.5	100.0	95.1	91.0
ձկնամթերք	95.2	102.7	117.4	87.1	97.3
կաթնամթերք	92.0	93.4	101.0	93.7	90.6

	2000 թվական				1999թ. հունվար-հոկտեմբերը 1998թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	հոկտեմբերը			հունվար-հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. սեպտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ			
ծու	85.7	75.4	103.5	92.0	88.1
կենդանական և բուսական յուղ	91.4	91.4	100.9	89.9	95.1
միրգ	82.3	91.4	101.8	80.9	144.4
բանջարեղեն և կարտոֆիլ	89.0	114.7	92.7	87.1	85.9
շաքարավազ	111.2	108.7	99.8	93.7	88.8
սուրճ, թեյ, կակաո	92.0	91.3	99.9	92.2	100.0
հրուշակեղեն	96.2	96.0	99.8	96.6	97.7
ոչ ոգելից խմիչք	97.7	97.7	99.8	98.2	99.2
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	102.2	103.8	100.1	134.7	109.4

Ոչ պարենային ապրանքների գներ: 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 0.1 տոկոս գնաճին հիմնականում նպաստել է վառելիքի (պայմանավորված հեղուկ գազի 8.6 և վառելափայտի 4.5 տոկոս գնաճով), հագուստի, կտորեղենի, գրենական պիտույքների, ոսկերչական իրերի, կահույքի, լվացամիջոցների, շինանյութերի 0.1-5.1 տոկոս գնաճը: Միաժամանակ, կենցաղային էլեկտրաապրանքների, անձնապիտո ապրանքների, խոհանոցային սպասքի, կոշիկեղենի, դեղամիջոցների, մշակույթի, այգեգործական, գեղահարդարման ապրանքների, տեքստիլեղենի ապրանքախմբերում արձանագրվել է գների 1.0-0.1 տոկոս նվազում:

2000թ. հոկտեմբերին հանրապետությունում, ընդհանուր առմամբ, պահպանվել է բենզինի գնի նախորդ ամսվա նակարդակը, իսկ դիզելային վառելիքի գծով, ի տարբերություն նախորդ 4 ամիսների, որոնց ընթացքում գրանցվել էր 22.6 տոկոս ընդհանուր գնաճ, ընթացիկ ամսում արձանագրվել է վերջինիս գնի 0.7 տոկոս նվազում: Հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 24.4 տոկոս, իսկ դիզելային վառելիքինը՝ 27.3 տոկոս:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(տոկոսներով)

	2000 թվական				1999թ. հունվար-հոկտեմբերը 1998թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	հոկտեմբերը			հունվար-հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. սեպտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ			
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	101.0	101.6	100.1	103.2	101.1
հագուստ և կտորեղեն	95.7	95.8	100.7	95.2	99.9
վառելիք	99.2	108.4	105.1	110.3	98.2
կահույք	100.2	101.4	100.4	99.8	100.9
գորգեղեն	102.5	102.3	99.8	100.6	98.5
տեքստիլեղեն	103.6	97.8	99.9	94.8	98.7
խոհանոցային սպասք	98.6	97.6	99.3	97.7	101.0
լվացամիջոցներ	100.8	96.1	100.3	95.1	100.0
շինանյութեր	104.9	104.6	100.1	100.6	99.9
այգեգործական ապրանքներ	98.6	98.5	99.8	99.1	101.3
դեղամիջոցներ	94.0	89.4	99.6	90.0	95.0
մշակույթի ապրանքներ	95.4	93.9	99.7	93.6	99.0
գրենական պիտույքներ	101.1	100.1	100.6	88.9	99.1
գեղահարդարման ապրանքներ	94.4	93.7	99.8	95.1	99.6

	2000 թվական				1999թ. հունվար-հոկտեմբերը 1998թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	հոկտեմբերը			հունվար-հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. սեպտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ			
ոսկերչական ապրանքներ	96.5	100.9	100.1	96.0	87.4
անձնապիտո ապրանքներ	100.9	99.2	99.2	97.8	101.9

Ծառայությունների սակագներ: Ընթացիկ տարվա հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.6 տոկոս հավելաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 15.3 տոկոս հավելաճի դիմաց:

2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների 0.1 տոկոս հավելաճը պայմանավորված է մշակույթի (1.4 տոկոս) և կենցաղային (0.9 տոկոս) ծառայությունների սակագների հավելաճով: Կապի, հանգստի և հանրային սննդի ծառայությունների սակագների նվազումը կազմել է 0.4-0.2 տոկոս, իսկ տրանսպորտի, կրթության, առողջապահության, բնակարանային-կոմունալ, իրավական և բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

	2000 թվական				1999թ. հունվար-հոկտեմբերը 1998թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	հոկտեմբերը			հունվար-հոկտեմբերը 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. սեպտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ			
Ծառայություններ, ընդամենը	101.6	101.5	100.1	101.5	116.6
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային	102.7	102.7	100.9	100.6	103.0
բնակարանային-կոմունալ	100.1	100.1	100.0	100.0	121.0
առողջապահության	102.6	102.6	100.0	103.3	105.7
տրանսպորտի	102.5	101.5	100.0	100.4	99.6
կապի	100.6	100.8	99.6	99.3	183.7
մշակույթի	102.3	102.7	101.4	103.9	111.4
կրթության	102.4	102.6	100.0	114.5	111.1
հանգստի	102.5	102.6	99.8	97.8	100.1
հանրային սննդի	101.6	102.0	99.8	101.9	99.1
իրավական և բանկային	104.0	104.0	100.0	101.6	103.7

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկվող բնակավայրերից 7-ում 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է սպառողական գների 0.9-0.1% նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Վաղարշապատում), իսկ Երևանում, Մարտունիում և Հրազդանում (Չարենցավանում) սպառողական գներն աճել են 0.1-0.5 %-ով:

Պարենային ապրանքների շուկայում ընթացիկ ամսում դիտարկված բնակավայրերից 5-ում արձանագրվել է գների 1.9-0.6% նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է ք. Վաղարշապատում): Կապանում և Եղեգնաձորում պահպանվել է պարենային ապրանքների գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 3 բնակավայրերում գրանցվել է 0.1-1.0% գնաճ: Երևանում պարենային ապրանքների գներն աճել են 0.1 տոկոսով:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Ձու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԴԴ, ընդամենը	939	1174	1429	533	385	247	118	152	78	127
<i>այդ թվում՝</i>										
Երևան	896	1208	1433	543	377	247	125	172	82	123
Գյումրի	950	1075	1283	527	375	253	133	133	57	158
Վանաձոր	950	1050	1450	520	360	247	95	130	60	140
Վաղարշապատ	1100	1200	1400	500	350	240	110	130	100	150
Թալին	1000	1250	1300	500	400	240	120	100	80	130
Դիլիջան	1000	1200	1400	500	450	250	100	100	55	100
Հրազդան, Չարենցավան	1100	1200	1500	550	400	240	110	120	70	120
Եղեգնաձոր	950	1100	1350	450	400	250	90	100	100	100
Մարտունի	800	1050	1550	550	480	250	90	150	70	100
Կապան	1120	1100	1600	500	410	262	108	120	96	160

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի, բուսական յուղի 1 լիտրի, ձվի տասնյակի հաշվարկով) 2000թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5182 դրամ, ինչը 1.8%-ով գերազանցել է նույնամուն ապրանքատեսակների սեպտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5092 դրամ): Նշված ժամանակահատվածում վերոհիշյալ պարենային ապրանքներից 5-ի գնաճը կազմել է 0.8-52.0% (գնաճի ամենաբարձր տոկոսը բաժին է ընկել գլուխ սոխին): Շաքարավազի գինը նախորդ ամսվա 30-ի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ մյուս 4 ապրանքատեսակների գծով արձանագրվել է 17.0-0.2% նվազում: Դիտարկված բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Եղեգնաձորում (4890 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Կապանում (5476 դրամ):

2000թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ դիտարկված բնակավայրերից 4-ում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.5% գնաճ: Երևանում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 0.3%: Կապանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 5 բնակավայրերում արձանագրվել է գների 0.4-0.1% նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոսն արձանագրվել է Եղեգնաձորում):

Բնակչությանը նատուցված ծառայությունների ոլորտում ընթացիկ ամսում սեպտեմբերի համեմատ հետազոտված բնակավայրերից 6-ում արձանագրվել է սակագների 0.4-0.1% նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Թալինում): Վանաձորում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 3 հետազոտված բնակավայրերում արձանագրվել է սակագների 0.1-1.4% հավելում:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2000թ. հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում՝</i>				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	97.2	96.4	95.4	94.1	101.0	101.6
<i>այդ թվում՝</i>						
Երևան	96.9	96.1	95.1	93.3	100.7	101.7
Գյումրի	98.5	97.5	96.5	95.5	102.2	104.7
Վանաձոր	97.5	96.7	95.8	95.1	101.1	102.1
Վաղարշապատ	97.5	97.0	95.8	94.4	102.7	100.4
Թալին	98.3	98.0	97.4	96.9	101.0	100.1
Դիլիջան	97.4	97.1	95.5	95.2	104.1	99.9
Հրազդան, Չարենցավան	95.6	95.0	94.2	93.4	98.6	99.8
Եղեգնաձոր	98.0	97.1	96.4	96.3	100.1	103.5
Մարտունի	97.8	97.2	95.7	95.1	103.6	102.1
Կապան	98.6	98.5	98.3	96.7	99.3	99.0

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2000թ. հոկտեմբերին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 101.5%, 1999թ. համապատասխան ժամանակահատվածի 104.5%-ի դիմաց:

Չնայած 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ամփոփ ինդեքսը կազմել է 100.0%, այնուամենայնիվ արդյունաբերության առանձին ճյուղերում արձանագրվել են գնային փոփոխություններ թե՛ աճման, թե՛ նվազման միտումով: Այսպես, թողարկած արտադրանքի գնաճ է գրանցվել հրատարակչական գործերի արտադրությունում (37.9%), թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (3.9), թեթև (3.5), գունավոր մետալուրգիայի (2.7), շինանյութերի (2.1%) արդյունաբերությունում: Անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի և ռադիոէլեկտրոնիկայի արդյունաբերությունում պահպանվել է թողարկված արտադրանքի գների նախորդ ամսվա նակարդակը, իսկ մեքենաշինության, քիմիական, մալթաքիմիական և կենսատեխնոլոգիական, սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի) և էներգետիկայի արդյունաբերությունում արձանագրվել է գների 10.3-0.9% նվազում:

2000թ. հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գները նվազել են 1.1 տոկոսով:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 0.8%-ով, ինչը պայմանավորված է օդային (3.5%), երկաթուղային (0.9), խողովակաշարային (0.6) և ավտոմոբիլային (0.1%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների նվազմամբ:

2000թ. հոկտեմբերին 1999թ. հոկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 1.1 տոկոս:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 101.0 տոկոս, ընդ որում իրացման բոլոր ուղղություններով գրանցվել է գյուղմթերքն իրացման գների 0.3-3.5 տոկոս գնաճ: Դիտարկված մարզերից Սյունիքում և Լոռիում ընթացիկ ամսում գյուղմթերքների

գներն աճել են 3.4 տոկոսով, իսկ մյուս 8-ում գրանցվել է իրացման գների 2.9-0.2 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Արարատում):

2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է բուսաբուծական մթերքների իրացման գների 1.6 տոկոս հավելած: Դրան մեծապես նպաստել է բանջարեղենի (3.1 տոկոս), տեխնիկական (3.4), հացահատիկային (1.7), բոստանային (1.5 տոկոս) մշակաբույսերի ապրանքախմբերում արձանագրված իրացման գնաճը: Ընթացիկ ամսում իրացման բոլոր ուղղություններով գրանցվել է բուսաբուծական մթերքների իրացման գնաճ՝ կազմելով 0.5-2.6 տոկոս:

Հանրապետության դիտարկված մարզերից 4-ում 2000թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ բուսաբուծական մթերքների իրացման գներն աճել են 0.1-9.1 տոկոսով (գնաճի համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Լոռու մարզում), իսկ մյուս 6 մարզերում գրանցվել է գների 4.8-1.5 տոկոս նվազում:

Անասնապահական մթերքների իրացման գների ընդհանուր մակարդակը 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.3 տոկոսով: Անհատ քաղաքացիներին և մթերող կազմակերպություններին իրացված անասնապահական մթերքների գները նվազել են համապատասխանաբար 1.6 և 1.5 տոկոսով, իսկ շուկայում գրանցվել է իրացման գնաճ՝ կազմելով 4.9 տոկոս: Անասնապահական մթերքների իրացման գների նվազումը հիմնականում պայմանավորված է մսամթերքի իրացման գների 2.5 տոկոս նվազմամբ: Դրան զուգընթաց, կաթնամթերքի, բրդի, ձվի, կաշվեհումքի ապրանքախմբերում գրանցվել է 1.0-6.4 տոկոս գնաճ: 2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 6-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 4.7-0.3 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Շիրակում), իսկ մյուս 4-ում՝ գնաճ կազմելով 0.1-2.4 տոկոս:

2000թ. հոկտեմբերին 1999թ. հոկտեմբերի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 90.5 տոկոս, այդ թվում բուսաբուծությանը՝ 91.1, անասնապահությանը՝ 89.3 տոկոս, իսկ հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 87.5 տոկոս, 82.3 և 92.8 տոկոս:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում ըստ մարզերի

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը 2000թ. հոկտեմբերին		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը 2000թ. հոկտեմբերին	
	2000թ. սեպտեմբերի նկատմամբ	1999 թվականի հոկտեմբերի նկատմամբ	2000թ. սեպտեմբերի նկատմամբ	1999 թվականի հոկտեմբերի նկատմամբ
<i>ՀՀ, ընդամենը</i>	101.0	90.5	103.1	110.0
այդ թվում՝				
Արագածոտն	99.8	90.9	95.0	109.8
Արարատ	97.1	79.8	100.2	106.4
Արմավիր	98.4	83.0	98.9	110.0
Գեղարքունիք	98.2	94.9	97.7	109.8
Լոռի	103.4	86.3	96.8	120.9
Կոտայք	98.3	114.5	106.0	103.9
Շիրակ	98.2	101.0	89.2	103.6
Խյունիք	103.4	99.8	97.8	96.7
Վայոց Ձոր	97.5	94.2	101.7	106.8
Տավուշ	98.7	89.3	103.4	118.8

2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների 3.1 տոկոս հավելաճը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների (25.7 տոկոս), անասնակերի (23.9), անասունների (1.0), էներգիայի և քսայուղերի (0.7) գնման գների հավելաճով: Մեքենասարքավորումների և դրանց պահեստամասերի գնման գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ սերմացուների ու տնկիների, շինանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, գյուղատնտեսական մանր գործիքների, պարարտանյութերի ապրանքախմբերում գրանցվել է գնման գների 22.4-0.4 տոկոս նվազում:

2000թ. հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 4-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 0.2-6.0 տոկոս գնաճ (գնաճի համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Կոտայքում), իսկ մյուս 6 մարզերում՝ գնման գների 10.8-1.1 տոկոս նվազում: